

Ի Ն Ս Տ Ի Տ ՈՒ Տ Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

Հայկական դազթօջախների մեջ ուրույն աեդ է գրավում Ղզլարը, որը նշանակալից դեր է խաղացել հայ ժողովրդի նյութական ու հոգեոր մշակութի ասպարեզում: Մինչև օրս, սակայն, հրապարակի վրա դոյություն չունի որևէ քիչ թե շատ ամրոջական աշխատություն Ղզլարի հայկական դազթօջախի պատմության, ազգազրության ու բանահյուսության վերարերյալ:

Նկատի ունենալով այս, ինսախառար համապատասխան մեթոդական ցուցումներով և օգնությամբ խրախուսել է Մոսկվայում բնակվող, ընդհանուր առմամբ, մասվորական Գ. Գ. Գեորգյանին սահղծելու սույն աշխատությունը:

Սկսած 1958 թ. Գ. Գ. Գեորգյանը Ղզլարին վերարերող նյութեր է հավաքել ըազմապիսի տպագիր ազրյութներից ու մի շարք արխիվներից (Ղզլար, Մայկույ, Մախաչկալա, Ասարախան, Երեան), զուգակցելով դրան Ղզլարում և Ղզլարից դուրս այլ քաղաքներում ու ավաններում ընակվող ղզլարցիներից գրի առած ազգադրական ըանավոր հազորդումները և բանահյուսական սահղծադործությունները: Հեղինակն իր աշխատությունը ըաժանել է երկու հիմնական մասի՝ ազգա-

զրություն և բանահյուսություն: Ազգադրական ըաժնում նկատվում է որոշ անհամամասնություն. մի շարք ընազավառներ ներկայացված են առավել ամրոջական ու լիակատար տեսքով, քան մյուսները: Դա ըխում է նյութերի ընծեռած հնարավորությունից: Առանծին հարցեր, որոնք չեն մեղվել ընդհանուր շարադրանքին և հատվածական ընույթ ունեն, առանծնացված են և դրված վերջում որպես հավելված:

Բանահյուսության ըաժնում ըանավոր պատմողական արծակի աեսակները (հեքիաթ, առակ, ավանդություն) և չափածոն (երգեր) համեմատարար սակավ են, մինչդեռ բանածեային-դարծվածարանական փոքր ծավալի ստեղծադործությունները (առած-ասացվածք, օրհնանք, երգում, անեծք, հանելուկ, մականուն, դարծվածք և այլն) հարուստ ու ըազմակոզմանի են:

Ժողովածուում զեանզված Ղզլարի ժողովրդական երգերն ու պարեզանակները նոաադրել է ինքը՝ հեղինակը, իսկ խմրադրել է Լ. Ասավածարյանը: Ազգադրական առարկաների նկարներն ու դծադրերը կատարել է հեղինակը, արտանկարել է նկարիչ Ն. Խանզազյանը: